

մօտ: Դռուն բառը զոր կը յիշէ ցուցակագիր վրդ.ը, պէտք չէ հասկնալ Տաճարին աւագ դուռը, այլ այն նախադրուկը (propylées), որ Ս. Յարութեան Տաճարին անջատ մասն կը կազմէր, եւ նոյն Տաճարին պարսկական քանդուակէն յետոյ (614 թուին) այլ եւս չի վերաշինուեցաւ. ա՛ն յատուկ էր միայն Կոստանդինեան գեղեցկաշէն Պազիլիպալիս. նախադրուկին կործանուած մասերը երկար դարեր մնացին հողին տակ: Մենք անոր գոյութիւնը կըրնամք հաստատել երկու կերպով, պատմական և հնարասական:

Ա. Պասնակաւ.— Ինչպէս ծանօթ է, Ս. Յարութեան Տաճարը շինել տուած է Մեծն Կոստանդիանոս կայսրը. հոյակապ յիշատակարան մըն էր ան, կառուցուած մեր Փրկչի Ս. Գերեզմանին և Ս. Յարութեան ի պատիւ. ճարտարագետական գլուխ գործոց մը, ուր, ըստ վաղեմի ուղեգիր ուխտաւորաց, կը շողային ոսկին ու արծաթը սրբատաշ մարմարի ծաղկազարդ քանդակներով. բիւզանդական գեղարուեստի բոլոր նրբութիւնները կը փայլէին քրիստոնէական այս առաջին Տաճարին մէջ. որուն նաւակատիքը շքեղութեամբ կատարուեցաւ. Կեսարացի Եւսեբիոս եպիսկոպոսը խօսեցաւ իր նաւակատիքի ճառը Կայսեր եւ բազմաթիւ եպիսկոպոսաց, ինչպէս նաև խուռներամ հաւատացելոց ներկայութեան:

Եւսեբիոս՝ իր «Վարդ Կոստանդիանոսի» գրուածքին մէջ, Տաճարին ինչ ինչ մասերը կը նկարագրէ, թէև ոչ լրացուցիչ կերպով, և գաղափար մը կու տայ նախադրուկի մասին: Նորակերտ եկեղեցւոյ մասին իր գրածները յիշել մեր նպատակէն դուրս կը մնայ, բայց նախադրուկի իր նկարագրութիւնը պէտք է որ իր տողերովը նշանակուի, մեր նպատակին հասնելու, այսինքն Փազաւոնի Հայոց վանքին տեղը ճշգրիտ համար: Եւսեբիոսի նկարագրութեան համառօտութիւնն է հետևեալը. «Տաճարին աւագ դրան մօտ էր անդաստակը (atrium), անոր զբաւած տեղը կը տանէր եկեղեցւոյ ճակատի դուռը: Նոյն տեղը կը գտնուէին նախ բակ մը, յետոյ անոր երկու կողմի սրահները, եւ ի վերջոյ բակին դուռները: Ասկէց յետոյ, հրապարակի մէջտեղը (հաւանաբար շուկայ ըսել կ'ուզէ) կային գլխաւոր դռները, ուր ներելի էր գործաւորներուն իրենց ապրանքները ցուցադրելու. եւ անցորդները առիթ կ'ունենային դուռներէն ներս նայիլ ու